ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Արարատ-Ճանշին» ՍՊԸ-ի կողմից նախատեսվող ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի Վանաշեն բնակավայրի վարչական տարածքում գտնվող ՀՀ Արարատի մարզի Վանաշենի ԱԿԽ հանքավայրի 1-ին տեղամասում հանքարդյունահանման ընդերքօգտագործման իրավունք ստանալու շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ առաջին քննարկում /1-ին լսում/ :

Վեդի համայնք Վանաշեն բնակավայր: 14.08.2025 թ.

2025 թվականի օգոստոսի 8-ին ժամը 12:00-ին ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի Վանաշեն բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում /գյուղ Վանաշեն, Ազատության 13/ տեղի ունեցավ «ԱՐԱՐԱՏ-ՃԱՆՇԻՆ» ՍՊ Ընկերության /այսուհետ նաև՝ Ընկերություն/ կողմից ներկայացված ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի Վանաշեն բնակավայրի վարչական տարածքում գտնվող ՀՀ Արարատի մարզի Վանաշենի ԱԿԽ հանքավայրի 1-ին տեղամասում հանքարդյունահանման ընդերքօգտագործման իրավունք ստանալու շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ առաջին հանրային քննարկում /1-ին լսում/:

Հանրային քննարկմանը մասնակցում էին ՀՀ Արարատի մարզի Վեդու համայնքապետարանի աշխատակազմի Գյուղատնտեսության և Բնապահպանության բաժնի պետ՝ Շ. Բաքոյանը, համայնքապետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ներկայացուցիչներ, Վանաշեն բնակավայրի վարչական ղեկավար՝ Գոռ Խաչատրյանը և գյուղի բնակիչներ, Ընկերության ներկայացուցիչ՝ Արամայիս Ավագյանը և Ընկերության ներկայացուցիչ, փորձագետ՝ Գուրգեն Հակոբյանը:

Հանրային քննարկումը /1-ին լսումը/ բացեց և խոսքով հանդես եկավ Վեդու համայնքապետարանի աշխատակազմի Գյուղատնտեսության և Բնապահպանության բաժնի պետ՝ Շ. Բաքոյանը, և հայտնեց, որ ՀՀ կառավարության 19.11.2014թ. թիվ 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով (այսուհետ նաև՝ Կարգ) կազմակերպվել և իրականացվում է Ընկերության կողմից ներկայացված ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի Վանաշեն բնակավայրի վարչական տարածքում գտնվող ՀՀ Արարատի մարզի Վանաշենի ԱԿԽ հանքավայրի 1-ին տեղամասում հանքարդյունահանման ընդերքօգտագործման իրավունք ստանալու շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ թվով 1-ին հանրային քննարկումը /1-ին լսում/:

Ղեկավարվելով Կարգի դրույթներով, Վեդի համայնքի ղեկավարի կողմից հանրային քննարկումների պատասխանատու է նշանակվել Վեդու համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ՝ Շ. Բաքոյանը :

Վեդու համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Շ. Բաքոյանը, նշեց, որ քննարկվող հարցի շուրջ 1-ին

հանրային քննարկումն է /1-ին լսում/, վերջինս առաջարկեց ձեռնարկողին հանդես գալ համապատասխան զեկույցով, որից հետո կիրականացվեն քննարկումները:

Ելույթ ունեցավ Ընկերության ներկայացուցիչ, փորձագետ՝ Գուրգեն Հակոբյանը, վերջինս ներկայացրեց Վանաշենի ԱԿԽ հանքավայրի 1-ին տեղամասում հանքարդյունահանման ընդերքօգտագործման շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ հարցեր, որից հետո անցան քննարկման փուլին:

Վանաշեն բնակավայրի բնակիչ՝ Տիգրան Մկրտչյանը հարցեր ուղղեց Ընկերության ներկայացուցիչներին՝

1. Որտեղ է լինելու ավազի հանքավայրը.
2. Հանքավայրի շահագործումը օգուտ կտա բնակավայրին արդյոք.
3. Աշխատատեղեր լինելու է, բնակավայրի բնակիչներ ընդգրկվելու են արդյոք.

Հարցերին պատասխանեց Ընկերության ներկայացուցիչ, փորձագետ՝ Գուրգեն Հակոբյանը հայտնելով, որ ընկերության կողմից նախատեսվում է հումքը արդյունահանել գետի հունից 10 մետր հեռավորությամբ, Վեղի քաղաքային բնակավայրից մինչև Վանաշեն բնակավայրի սկզբնամաս ընկած տարածքից: Աշխատատեղեր լինելու են և ընդգրկվելու են բնակավայրի բնակիչներ:

Հաջորդիվ Վանաշեն բնակավայրի վարչական ղեկավար՝ Գոռ Խաչատրյանը հարց ուղղեց Ընկերությանը և անհանգստություն հայտնեց «ԱՐԱՐԱՏ-ՃԱՆՇԻՆ» ՍՊ Ընկերությունը ինչ վնաս կարող է տալ Վանաշենի գյուղատնտեսական նշանակության հողերին:

Հարցին պատասխանեց Ընկերության ներկայացուցիչ, փորձագետ՝ Գուրգեն Հակոբյանը հայտնելով, որ Ընկերության գործունեությունը չի կարող վնաս տալ գյուղատնտեսությանը : Արդյունահանվելու է հումքը, պահպանվելու է ափապաշտպան գոտին և գոտու թեքությունը, փլուզումներից խուսափելու նպատակով: Հանքը բացահանք է և տարիների ընթացքում վերականգնվելու է:

Հաջորդիվ հարց ուղղեց Ընկերությանը աշխատակազմի Գյուղատնտեսության և Բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ՝ Վահրամ Ծատուրյանը.

Ավազը գետի հունից ինչ հեռավորությունից եք արդյունահանելու և դա արդյոք հետագայում չի խանգարի գետի հունին:

Հարցին պատասխանեց Ընկերության ներկայացուցիչ, փորձագետ՝ Գուրգեն Հակոբյանը հայտնելով, որ Ընկերութունը հնչեցված հարցերը ուսումնասիրելու է և գործելու է չվնասելով շրջակա միջավայրին, ավազի արդյունահանման ամենամոտ և նվազագույն տարածքը գետից լինելու է 10 և ավելի մետր:

Հաջորդիվ հարց ուղղեց Ընկերությանը աշխատակազմի Գյուղատնտեսության և Բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ՝ Սիմոն Կարապետյանը.

1.Պաշարները ինչ խորության վրա են գտնվում:

2.Նախկինում ափերի փլուզման դեպքեր եղել են, պահպանվելու են արդյոք ափապաշտպան շերտերի թեքությունները:

Հարցերին պատասխանեց Ընկերության ներկայացուցիչ, փորձագետ՝ Գուրգեն Հակոբյանը հայտնելով, որ պաշարները 3 մետր խորության վրա են գտնվում գետի մակարդակից, ափապաշտպան շերտերի թեքությունը՝ 45 աստիճան պահպանվելու է:

Հաջորդիվ Վանաշեն բնակավայրի բնակիչ՝ Տիգրան Մկրտչյանը հարց ուղղեց Ընկերությանը.

Հանքի գործունեության ընթացքում անվտանգություն պահպանվելու է արդյոք:

Հարցին պատասխանեց Ընկերության ներկայացուցիչ, փորձագետ՝ Գուրգեն Հակոբյանը հայտնելով, որ Ընկերությունը ապահովելու է անվտանգություն:

Նախագահողը հարց ուղղեց արդյոք ազդակիր Վեղի համայնքի բնակիչների կողմից կան հարցեր, թե՞ ոչ: Հաշվի առնելով լսարանի դիրքորոշումը՝ հայտարարեց լսման ավարտ:

Կից ներկայացվում է մասնակիցների ցանկը՝ 1 թերթ և հանրային քննարկումների էլեկտրոնային կրիչը:

Վարող՝ Գյուղ. և Բնապահ. Բաժնի պետ՝ / / Շ. Բաքոյան

Նախաձեռնող՝ «ԱՐԱՐԱՏ-ՃԱՆՇԻՆ»
ՍՊԸ-ի տնօրեն՝ / / Ս. Վարդանյան

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

«ԱՐԱՐԱՏ ՃԱՆՇԻՆ» ՍՊ Ընկերության կողմից ներկայացված ՀՀ. Արարատի մարզի Վեդի համայնքի Վանաշեն բնակավայրի վարչական տարածքում գտնվող ՀՀ Արարատի մարզի Վանաշենի ԱԿԽ հանքավայրի 1-ին տեղամասում հանքարդյունահանման ընդերքօգտագործման իրավունք ստանալու շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային քննարկում /1-ին լսում/:

գ. Վանաշեն **08.08.2025թ.**

Հ/Հ	Անուն, Ազգանուն	Զբաղեցրած պաշտոնը	Ստորագրություն
1.	[illegible]	[illegible]	
2.	[illegible]	[illegible]	
3.	[illegible]	[illegible]	
4.	[illegible]	[illegible]	
5.	[illegible]	[illegible]	
6.	[illegible]	[illegible]	
7.	[illegible]	[illegible]	
8.	[illegible]	[illegible]	
9.	[illegible]	[illegible]	
10.	[illegible]	[illegible]	
11.	[illegible]	[illegible]	
12.	[illegible]	[illegible]	
13.	[illegible]	[illegible]	
14.	[illegible]	[illegible]	
15.	[illegible]	[illegible]	
16.			
17.			
18.			
19.			
20.			